Հավելված N 7
2025 թվականի հունվարի 21-ին կնքված
N «ԴՏՊ-1160-11012/ԳՄ-7/25» պայմանագրի

Ծրագրի եռամսյակային հաշվետվություն

**Միջոցառման անվանումը՝ «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալ-վերականգնողական ծառայություններ ցերեկային կենտրոնում»**

**Համառոտ բովանդակությունը՝** Խնամքի և սոցիալ-վերականգնողական ծառայությունների մատուցում Վարդենիսի տարածաշրջանի համայնքներում ապրող հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային կենտրոնում

**Հաշվետու ժամանակաշրջան՝** *2025թ. երկրորդ եռամսյակ*

| | Իրականացված գործողություններ | Ակնկալվող արդյունքները | Գնահատման չափանիշները և հիմնավորող փաստաթղթեր | Փաստացի մատուցած ծառայություններ | Մեկնաբանություն |
|---|---|---|---|---|---|
| | -Ըստ շահառուների կարիքների գնահատման, աշխատանքների պլանավորման, ժամանակացույցի շարունակվել են բոլոր աշխատանքները։<br>- Յուրաքանչյուր մասնագետ և խմբակավար իր կատարած աշխատանքների և արդյունքների մասին գրառումներ է կատարել հաշվետվություններում։<br>Ըստ կարիքների գնահատման արդյունքների կատարվել է որոշակի փոփոխություններ անհատական և խմբակային պարապմունքներում։<br>Շահառուների անվտանգությանը և ինքնազգացողությանը անընդհատ հետևում են պատասխանատուներն ու բուժքույրը։ | Շահառուների 80%-ի մոտ նկատվել է շոշափելի դրական արդյունքներ։<br>Բարելավվել են նաև մտավոր ունակությունները և մասնագիտական հմտությունները։ | Ծառայություններ մատուցողների և խմբակավարների դիտարկված փոփոխությունների գրառումներ։<br>Հարցումներ ընտանիքի անդամներից։<br>Անընդհատ կատարվում են համեմատություններ շահառուի սկզբնական և առկա վիճակի միջև։<br>Յուրաքանչյուր աշխատակից ամսվա վերջում հաշվետվություն է ներկայացնում | Տրամադրվել են սոց աշխատողի, հոգեբանի, հատուկ մանկավարժի ծառայություններ։<br>Շահառուները մասնակցել են կարպետագործության, շյուղագործության, գոբելենագործության, փայտամշակման, կար ու ձևի, համակարգչային հմտությունների տիրապետման խմբակների պարապմունքներին և ձեռք են բերել մասնագիտական որոշակի հմտություններ։<br>Շահառուների առողջությանը և ինքնազգացողությանը | Ծրագիրը շատ կարևոր է և դրական փոփոխություններ են արձանագրվել շահառուների առօրյա կյանքում։ Ընտանիքների հավաստմամբ և մեր դիտարկումներով նրանք անկաշկանդ շփվում են շրջապատի մարդկանց հետ, կարողանում են ինքնուրույն զբաղվել ինքնախնամքով, օգնում են տնտեսական գործերում։ Շահառուները հաճույքով են այցելում Կենտրոն, որտեղ իրենց ազատ ու անկաշկանդ են զգում, մասնակցում են բոլոր պարապմունքներին, ձեռք են |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | կատարված աշխատանքների և շահառուի մոտ եղած փոփոխությունների մասին: | հետևել է բուժքույրը, որը նրանց սովորեցրել է նաև ինքնախնամքի, իր մարմնի և շրջապատի մաքրության, հիգենայի, առողջ սննդի և ապրելակերպի կանոնները: | բերել ընկերներ և հասարակության մեջ ինքնադրսևորման հմտություններ: |
| Ընդամենը շահառուներ՝ 22 | | | | | |
| Ազդեցությունը՝ շահառուների մոտ կան նկատելի դրական փոփոխություններ մեծացել է շփման միջավայրը, որտեղ նրանք հանդիպում են տարբեր խառնվածք ունեցող մարդկանց: Շահառուներն ձեռք են բերել չկաշկանդվելու, հաղորդակցվելու, ընկերանալու հմտություններ: Նրանք արդեն բավականին ակտիվ են, չեն խուսափում հանրային վայրերից: Շահառուները մասնակցելով խմբակների պարապմունքներին ձեռք են բերել իրենց նախասիրություններին համապատասխան մասնագիտական հմտություններ, որոնք օգտագործում են իրենց առօրյա գործողություններում, զարգացել է ստեղծագործական միտքը և դիզայներական ճաշակը: | | | | | |

Շահառուները Վարդենիս քաղաքում և հարակից համայնքներում ապրող 18 + հաշմանդամություն ունեցող անձինք են:

Կազմակերպությունը երկար տարիներ աշխատում է հաշմանդամություն ունեցող անձանց հետ,  նրանցից ոմանք նախորդ տարիներին ընդգրկված են եղել  ծրագրում, մնացած մասնակիցները՝  Վարդենիսի ՄՄԾ-ի միջոցով:

*Նախարարություն՝*

*Նախարարության գլխավոր քարտուղար՝*

*Սամվել Մուրադյան*

\-------------------------------

*/ստորագրություն/*

*Կ.Տ.*

*Կազմակերպություն՝*

*Նախագահ՝    Մ.Եփրեմյան*

\-------------------------------

*/ստորագրություն/*

*Կ.Տ.*